ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

2023 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2024

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան…… 4

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի

ներդրումային ծրագրի կառուցվածքը……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի

ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և

ներդրումների ձևավորման աղբյուրները……8

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……8

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները ……9

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի

ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……12

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ……12

3.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի

իրականացմանն ուղղված ներդրումներ ……16

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման

ուղղությամբ կատարված ներդրումներ……17

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման

համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ ……18

ԲԱԺԻՆ 4.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից

իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները……20

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ……20

4.2 Աշխատանքների և ծառայությունների

շուկայական գների մոնիթորինգ ……20

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……22

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ծավալները ……22

5.2 Լուծարված հիմնական միջոցներից նվազեցումներ……25

5.3 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……26

Եզրակացություններ ……28

Հղումներ օգտագործված նյութերին ……32

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի դեկտեմբերի 20-ի №455-Լ որոշումով հաստատված 2024 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2023 թվականի Ներդրումային ծրագիրը [Որոշումներ 1-2] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն] ու տեղեկատվությունները [Տեղեկատվություններ 1-9]:

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, էլեկտրամատակարարման հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով: Ներդրումներ են նախատեսվել նաև նոր սպառողների միացման և հեռանկարային պահանջարկի սպառման բավարարման նպատակով բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև առևտրային հաշվառման համակարգի՝ մասնավորապես էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ընդլայնման ուղղությամբ: Բացի վերը նշվածը բաշխիչ ցանցերի շահագործման, կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվել են ներդրումներ՝ գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների, մեքենա մեխանիզմների, ռելեական պաշտպանության ու կապի միջոցների ձեռքբերման և արտադրական, վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման ուղղություններով, ինչպես Ընկերության բիզնես գործընթացների ավտոմատացման ծրագրային լուծումների ներդրման ուղղություններով: Նախատեսվել է իրականացնել նաև բնապահպանական նորմերի ապահովմանն ուղղված ներդրումներ: Հաստատված ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 37 756,1[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից ներդրումների մեծ մասը՝ շուրջ 61%-ը, նախատեսված էր ուղղել նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացմանը և Երևան, Ծաղկաձոր քաղաքներում ու Արագածոտնի մարզում անհրաժեշտ հզորությունների ավելացման նպատակով հատուկ ծրագրերի իրականացմանը:

Ներդրումների հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 19%-ը նախատեսված էր ուղղել առևտրային հաշվառման համակարգի բարելավմանը: Նախատեսված էր 0,38/0,22 կՎ ցանցերում ներդրումներ իրականացնել էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ուղղությամբ, որի արդյունքում նախատեսվում էր շուրջ 54 000 բաժանորդների սպառման համակարգեր միացնել էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգին:

Այս ուղղությամբ նախատեսված էր նաև տեղակայել նոր հաշվիչներ՝ շուկայի կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով:

Ներդրումների երրորդ հիմնական հատվածը՝ շուրջ 18%-ը նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը, ինչպես նաև Երևան քաղաքում և ՀՀ մարզերում 33 հասցեական աշխատանքների իրականացմանը (ներառյալ՝ համայնքներում ցանցերի ամբողջական վերազինում ենթաուղղությունը):

Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումները, որոնք կազմում են 799,5 մլն դրամ կամ ընդհանուր ներդրումների ավելի քան 2%-ը, նախատեսված էր ուղղել հետևյալ հիմնական միջոցների ձեռքբերմանը և աշխատանքների իրականացմանը.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 65,5 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի ձեռքբերում և ընկերության ռեսուրսների պլանավորման (ERP) համակարգի ներդրում՝ 100,0 մլն դրամ,
- վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում՝ 140,0 մլն դրամ,
- անվտանգության պարագաների, գործիքների և կապի միջոցների ձեռք բերում՝ 50,0 մլն դրամ,
- Ընկերության բիզնես գործընթացների ավտոմատացման ծրագրային լուծումների ներդրում՝ 15,0 մլն դրամ,
- բնապահպանական նորմերի ապահովմանն ուղղված ներդրումներ՝ 99,0 մլն դրամ,
- մեքենա մեխանիզմների ձեռքբերում՝ 230,0 մլն դրամ,
- Ընկերությանը պատկանող ենթակառուցվածքների երկրատեղեկատվական տարրերի հանութագրման աշխատանքների ամբողջական հավաքագրում՝ 100,0 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն՝ Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին Հաշվետվության՝ 2023 թվականի ընթացքում իրականացվել են 36 678,8 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 34 409,3 մլն դրամ:

Հարկ է նշել, որ Ընկերությունը Հաշվետվությունում ներառել է 426,6 մլն դրամի ծախսեր, որոնք Ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն եղել: Նշված ներդրումները վերլուծության ընթացքում չեն դիտարկվել սակագնային մարժայով փոխհատուցման տեսանկյունից:

Ընկերությունը նաև սեփական նախաձեռնությամբ, հիմք ընդունելով 2023 թվականի ընթացքում՝ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացված տեխնիկական աուդիտի արդյունքները՝ ներդրումների իրականացման համար օգտագործված նյութերի և սարքավորումների վերաբերյալ, իրականացրել է կապիտալ ծախսերում օգտագործվող նյութերի և սարքավորումների վերլուծություն, որի արդյունքում ներդրումների ծավալից նվազեցվել է 82,2 մլն դրամ՝ համարելով դրանք կարգավորման տեսանկյունից ավելի իրականացրած ծախսեր:

Ստորև Աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	2023 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		Փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ		
							2023 թվականի ընթացքում	2023 թվականի սկզբի դրությամբ մնացորդը	Ընդամենը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	6 816.6	18.1%	6 370.3	18.5%	93.5%	6 220.9	210.2	6 431.2
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	22 940.0	60.8%	20 064.2	58.3%	87.5%	20 138.8	2 130.5	22 269.3
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	7 200.0	19.1%	7 166.1	20.8%	99.5%	7 166.1	0.1	7 166.1
4	Գրասենյակային գույքի ձեռքբերում	65.5	0.17%	39.4	0.11%	60.2%	39.4	-	39.4
5	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	100.0	0.3%	35.6	0.1%	35.6%	35.6	-	35.6
6	Վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում	140.0	0.4%	221.8	0.6%	158.4%	224.3	1.0	225.3
7	Անվտանգության պարագաների, գործիքների և կապի միջոցների ձեռքբերում	50.0	0.1%	47.1	0.1%	94.2%	47.1	-	47.1
8	Ընկերության բիզնես գործընթացների ավտոմատացման ծրագրային լուծումների ներդրում	15.0	0.04%	39.6	0.1%	264.0%	39.6	-	39.6
9	Բնապահպանական նորմերի ապահովում	99.0	0.3%	61.3	0.18%	61.9%	39.9	21.4	61.3
10	Մեքենա մեխանիզմների ձեռքբերում	230.0	0.6%	257.2	0.75%	111.8%	257.2	-	257.2
11	Ընկերությանը պատկանող ենթակառուցվածքների	100.0	0.3%	106.7	0.31%	106.7%	106.7	-	106.7

	երկրատեղեկատվական տարրերի հանութագրման աշխատանքների ամբողջական հավաքագրում								
12	**Ընդամենը**	**37 756.1**	**100%**	**34 409.3**	**100%**	**91.1%**	**34 315.6**	**2 363.2**	**36 678.8**

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, Ներդրումային ծրագիրն Ընկերությունը կատարել է 91,1%-ով, որի 58,3%-ը ուղղվել է նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանը:

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև ներկայացված է 2023 թվականի ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Ավարտված և անավարտ աշխատանքների արժեքը		Ավարտված աշխատանքների արժեքը	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	2 363.2	6.4%	2 363.2	6.9%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	29 102.6	79.3%	27 383.7	79.6%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	400.6	1.1%	400.6	1.2%
4	Նախագծային աշխատանքների ուղղությամբ ծախսումներ	1 071.1	2.9%	598.5	1.7%
5	Ոչ նյութական ակտիվներ	148.3	0.4%	148.3	0.4%
6	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	3 593.0	9.8%	3 515.0	10.2%
6.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*37.3*	*0.1%*	*37.3*	*0.1%*
6.2	*նյութական ծախսումներ*	*2 178.4*	*5.9%*	*2 131.2*	*6.2%*

6.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*1 233.3*	*3.4%*	*1 205.3*	*3.5%*
6.4	*այլ ծախսումներ*	*144.0*	*0.4%*	*141.1*	*0.4%*
7	**Ընդամենը**	**36 678.8**	**100%**	**34 409.3**	**100%**

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, շահագործման հանձնված ներդրումների 6,9%-ը նախորդ ժամանակաշրջանում իրականացված և 2023 թվականի սկզբի դրությամբ ավարտված աշխատանքներն են: Եթե հաշվի առնենք, որ նախորդ տարվա վերջում նշված ծավալի մասնաբաժինը կազմել է 5,6%, ապա կարելի է փաստել, որ նախորդ տարվա համեմատ Ընկերության կողմից շահագործման հանձնված ակտիվների ծավալը նվազել է 1,3 տոկոսային կետով:

Մյուս փաստը՝ սեփական ուժերով իրականացված աշխատանքների ծավալի ավելացումն է: Մասնավորապես՝ 2022 թվականի ընթացքում սեփական ուժերով իրականացված աշխատանքների ծավալը ընդհանուր աշխատանքներում կազմել 8,8%, իսկ 2023 թվականին կազմել է՝ 10,2%: Ինչպես տեսնում ենք 2022 թվականի համեմատ 1,4 տոկոսային կետով ավելացել է սեփական ուժերով իրականացված աշխատանքների ծավալը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ 2023 թվականին կապալառու կազմակերպությունների միջոցով իրականացված աշխատանքների ծավալում զգալի մասը՝ ավելի քան 60,6%-ը, կազմում են նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումները:

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2023 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով Ընկերությունը Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսել էր իրականացնել 6 816,6 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցերի բարեկարգման նպատակով: Փաստացի իրականացվել են 6 431,2 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 6 370,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

Էլեկտրամատակարարման հուսալիության ցուցանիշների ուսումնասիրությունը [Տեղեկատվություն 5] ցույց է տալիս, որ 2023 թվականին էլեկտրական ցանցերում անջատումները հիմնականում բաժին են ընկնում 0,4-6(10) կՎ լարման ցանցերին՝ անջատումների շուրջ 90%-ը:

Սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ 2023 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է 0,4-6(10) կՎ լարման ցանցերում 2022 և 2023 թվականների ընթացքում գրանցված հրաժարումների քանակների [Տեղեկատվություն 5] համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2022 թվականի ընթացքում գրանցված 5449 հրաժարումների համեմատ, 2023 թվականին հրաժարումների թիվը նվազել է շուրջ 33%-ով և կազմել է 3676 հրաժարում: Ընդհանուր համակարգի լարման բոլոր մակարդակներում հրաժարումների թիվը նույնպես նվազել է շուրջ 31%-ով՝ կազմելով 4076 հրաժարում (2022 թվականին՝ 5883):

Հոսանքազրկումների միջին հաճախության (հոսանքազրկում/բաժանորդ) ցուցանիշը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2022 թվականի համեմատ բարելավվել է շուրջ 8,7%-ով: Բացասական ցուցանիշ է գրանցվել Երևան քաղաքում և Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի և Սյունիքի մարզերում՝ համապատասխանաբար՝ 17,0%-ով, 30,1%-ով, 5,8%-ով, 7,7%-ով և 76%-ով:

Հոսանքազրկումների միջին տևողության (րոպե/բաժանորդ) ցուցանիշը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2022 թվականի համեմատ ևս բարելավվել է շուրջ 18,1%-ով: Բացասական ցուցանիշ է գրանցվել Երևան քաղաքում և Արագածոտնի, Կոտայքի և Սյունիքի մարզերում՝ համապատասխանաբար՝ 3,2%-ով, 3,8%-ով, 3,1%-ով, 7,7%-ով և 31,1%-ով:

Իսկ հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2022 թվականի համեմատ (12,85 ընդհատում/ժամ) հանրապետության ամբողջ տարաշքում բարելավվել է շուրջ 18,3%-ով՝ կազմելով 10,5 ընդհատում/ժամ:

Վերը նշվածի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3[2]

Սպասարկման տարածքը	**Հոսանքազրկումների միջին հաճախություն**				**Հոսանքազրկումների միջին տևողություն**			
	Չափի միավոր	2022թ. փաստ.	2023թ. փաստ.	2022թ.փաստ. 2023 թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2022 թ. փաստ.	2023 թ. փաստ.	2022 թ.փաստ. 2023 թ. փաստ. նկատմամբ
Երևան	հոսանքա-զրկում/բաժանորդ	3.8	4.4	-17.0%	րոպե/բաժանորդ	286.4	295.7	-3.2%
Արարատ	հոսանքա-զրկում/բաժանորդ	3.2	1.5	54.1%	րոպե/բաժանորդ	346.5	147.4	57.5%
Վայոց ձոր	հոսանքա-զրկում/բաժանորդ	5.1	3.7	26.2%	րոպե/բաժանորդ	396.3	262.9	33.7%
Արագածոտն	հոսանքա-զրկում/բաժանորդ	5.3	6.9	-30.1%	րոպե/բաժանորդ	545.9	566.9	-3.8%
Արմավիր	հոսանքա-զրկում/բաժանորդ	6.2	6.6	-5.8%	րոպե/բաժանորդ	594.1	536.9	9.6%
Կոտայք	հոսանքա-զրկում/բաժանորդ	6.0	6.5	-7.7%	րոպե/բաժանորդ	642.2	662.0	-3.1%
Գեղարքունիք	հոսանքա-զրկում/բաժանորդ	16.0	9.5	41.0%	րոպե/բաժանորդ	1319.3	761.0	42.3%
Տավուշ	հոսանքա-զրկում/բաժանորդ	8.5	4.5	47.1%	րոպե/բաժանորդ	693.4	305.9	55.9%
Շիրակ	հոսանքա-զրկում/բաժանորդ	4.8	3.6	25.2%	րոպե/բաժանորդ	331.1	243.3	26.5%
Սյունիք	հոսանքա-զրկում/բաժանորդ	5.8	10.2	-76.0%	րոպե/բաժանորդ	496.3	650.8	-31.1%
Լոռի	հոսանքա-զրկում/բաժանորդ	10.9	8.1	25.4%	րոպե/բաժանորդ	719.0	469.6	34.7%
Ընդամենը ՀՀ	**հոսանքա-զրկում/բաժանորդ**	**6.0**	**5.5**	**8.7%**	**րոպե/բաժանորդ**	**498.7**	**408.2**	**18.1%**

[2] Աղյուսակ 3-ում ներառված չեն պլանային նորոգման պատճառով և ոչ մատակարարի մեղքով իրականացված ընդհատումները (այլ անձանց պատճառով, ֆորս մաժորի պատճառով):

Ինչ վերաբերում է մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության (լարման շեղում/բաժանորդ) և տևողության (ժամ/բաժանորդ) ցուցանիշներին [Տեղեկատվություն 4], ապա Աղյուսակ 4-ից երևում է, որ հանրապետությունում ընդհանուր ցուցանիշները 2022 թվականի համեմատ բարելավվել են համապատասխանաբար՝ 3,1% և 8,9%-ով: Ցուցանիշների վատթարացում է գրանցվել Երևան քաղաքում և Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում: Մնացած մարզերում ցուցանիշները բարելավվել են:

Աղյուսակ 4

Սպասարկման տարածքը	Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն				Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն			
	Չափի միավոր	2022թ. փաստ.	2023թ. փաստ.	2022թ. փաստ. 2023թ. փաստ. նկատմամբ	Չափի միավոր	2022թ. փաստ.	2023թ. փաստ.	2022թ. փաստ. 2023թ. փաստ. նկատմամբ
Երևան	լարման շեղում/բաժանորդ	4.9	5.2	-5.2%	ժամ/բաժանորդ	984.8	961.2	2.4%
Արարատ	լարման շեղում/բաժանորդ	5.6	4.0	28.1%	ժամ/բաժանորդ	1 079.5	751.3	30.4%
Վայոց Ձոր	լարման շեղում/բաժանորդ	9.7	8.7	10.5%	ժամ/բաժանորդ	1 814.2	1 562.7	13.9%
Արագածոտն	լարման շեղում/բաժանորդ	6.2	4.0	35.1%	ժամ/բաժանորդ	1 161.0	722.2	37.8%
Արմավիր	լարման շեղում/բաժանորդ	4.5	3.1	32.2%	ժամ/բաժանորդ	886.6	572.1	35.5%
Կոտայք	լարման շեղում/բաժանորդ	3.7	4.4	-21.2%	ժամ/բաժանորդ	720.6	782.2	-8.5%
Գեղարքունիք	լարման շեղում/բաժանորդ	6.8	7.8	-14.4%	ժամ/բաժանորդ	1 294.0	1 425.2	-10.1%
Տավուշ	լարման շեղում/բաժանորդ	3.7	3.6	2.8%	ժամ/բաժանորդ	745.4	641.3	14.0%
Շիրակ	լարման շեղում/բաժանորդ	5.1	3.5	32.3%	ժամ/բաժանորդ	985.9	640.3	35.1%
Սյունիք	լարման շեղում/բաժանորդ	6.1	8.1	-32.1%	ժամ/բաժանորդ	1 168.9	1 487.1	-27.2%
Լոռի	լարման շեղում/բաժանորդ	1.9	2.3	-19.1%	ժամ/բաժանորդ	365.8	413.6	-13.1%
Ընդամենը ՀՀ	**լարման շեղում/բաժանորդ**	**4.8**	**4.6**	**3.1%**	**ժամ/բաժանորդ**	**936.2**	**852.8**	**8.9%**

Ներդրումային ծրագրի շրջանակում սպասարկման որակի ցուցանիշների ուղղությամբ՝ 3 515,9 մլն դրամի ներդրումներ են իրականացվել 0,4/6/10 կՎ և 161,4 մլն դրամի՝ 35/110 կՎ լարման բաշխիչ ցանցերի վերակառուցման ենթաուղղությամբ, ևս 89,1 մլն դրամի ներդրումներ են իրականացվել արտադրական շենքերի վերակառուցման ենթաուղղությամբ, իսկ ռեակտիվ հզորության կոմպենսացիայի համակարգերի տեղակայում ենթաուղղությամբ իրականացվել են 29,0 մլն դրամի ներդրումներ:

Նախատեսված էր նաև 90,0 մլն դրամի ներդրումներ իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարեկարգման նպատակով: Ներդրումներն իրականացվել են 109,8 մլն դրամ ծավալով, որից շահագործման են հանձնվել՝ Երևան քաղաքում 91,0 մլն դրամի աշխատանքներ, իսկ Շիրակի, Կոտայքի,արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերում՝ 11,4 մլն դրամի աշխատանքներ: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 16 բազմաբնակարան շենքերի շուրջ 70 մուտքերում բարելավել են էլեկտրամատակարարման ցանցերը: Հատկանաշական է, որ մարզերում այս ծրագրով ներդրումները իրականացվել են բավականին քիչ ծավալով: Նախորդ տարվա համեմատ այս ենթաուղղությամբ ներդրումները գրեթե 3 անգամ պակասել են:

Այլընտրանքային էլեկտրամատակարարման ապահովում (մալուխային գծերի շղթաների ստեղծում) ենթաուղղությամբ Ներդրումային ծրագրով նախատեսված էր 900,0 մլն դրամ: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 968,4 մլն դրամի ներդրումներ:

Սպասարկման որակի ցուցանիշների ուղղությամբ նախատեսված էր 2 142,6 մլն դրամ ծավալով իրականացնել 34 հասցեական ծրագրեր, որից 9-ում նախատեսված էր ամբողջությամբ վերազինել բնակավայրերի էլեկտրամատակարարման համակարգը: Այս ուղղությամբ իրականացվել են 1 557,7 մլն դրամի ներդրումներ: Արդյունքում ամբողջությամբ ավարտվել են 18 հասցեական աշխատանքներ, 4 հասցեական ծրագրերում աշխատանքներն իրականացվել են մասնակի, իսկ 12-ում ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել:

3.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2023 թվականին նախատեսվում էր ներդնել 20 800,0 մլն դրամ: Իրականցվել են 20 541,8 մլն դրամի ներդրումներ, որից փաստացի շահագործման են հանձնվել 18 321,8 մլն դրամի հիմնական միջոցներ: Արդյունքում՝ 2023 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 14 051 նոր բաժանորդներ: Այս ուղղությամբ 265,1 մլն դրամի ներդրումները դեռևս չեն մասնակցում լիցենզավորված

գործունեությանը, քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել, ևս 31,5 մլն դրամի ներդրումներ իրականացվել են առանց միացման վճարի գանձման:

Հարկ է նաև նշել, որ 2023 թվականին ցանցին միացված նոր սպառողներից ընկերության կողմից գանձվել է 3 430,1 մլն դրամի միացման վճարներ, որը ենթակա է նվազեցման սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացման համար նախատեսված էր իրականացնել 2 090,0 մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են 1 701,1 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 1 659,6 մլն դրամի ներդրումներ: Արդյունքում Երևան և Ծաղկաձոր քաղաքները ապահովվել են անհրաժեշտ նոր հզորություններով, վերակառուցվել է նաև «Բյուրական» 35 կՎ լարման օդային գիծը:

Եվս 50,0 մլն դրամ նախատեսված էր այլ անձանց պատկանող ենթակառուցվածքների ձեռքբերման համար: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 26,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ իրականացված ներդրումներ

Ներդրումային ծրագրի առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 7 200,0 մլն դրամի ներդրումներ, որի շրջանակում նախատեսված էր էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրում 0,38/0,22 կՎ լարման ցանցերում: Պետք է փոխարինվեին նաև հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները:

Համաձայն Հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 7 166,1 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինում՝ 299,5 մլն դրամ, որից 129,4 մլն դրամը՝ միաֆազ և 170,1 մլն դրամը՝ եռաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման ուղղությամբ,
- 0,38/0,22 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրում՝ 6 866,6 մլն դրամ:

Արդյունքում ըստ Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության 2023 թվականի ընթացքում (ենթակայաններում և բաժանորդների համար տեղակայված) շուրջ 50 000 հատ հաշվիչ փոխարինվել և ներառվել է էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգում, իսկ 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համակարգում ներառված ընդհանուր հաշվիչների թիվը կազմել է շուրջ 750 000 հատ:

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 65,5 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի ձեռք են բերվել 39,4 մլն դրամի ապրանքներ,
- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի, լիցենզիաների և համալրող սարքավորումների ձեռքբերում՝ 100,0 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք են բերվել 35,6 մլն դրամի համակարգիչներ, մոնիտորներ, անխափան սնուցման սարքավորումներ և ծրագրեր,
- վարչական շենքերի և շինությունների հիմնանորոգում՝ 140,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2023 թվականի ընթացքում ներդրվել է 224,3 մլն դրամ, որից շահագործման է հանձնվել 221,8 մլն դրամի հիմնական միջոցներ,
- անվտանգության պարագաների, գործիքների և կապի միջոցների ձեռքբերում՝ 50,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 47,1 մլն դրամի չափիչ սարքեր, անվտանգության պարագաներ, կապի միջոցներ և գործիքներ,
- Ընկերության բիզնես գործընթացների ավտոմատացման ծրագրային լուծումների ներդրում՝ 15,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 39,6 մլն դրամի ներդրումներ,
- բնապահպանության նորմերի ապահովմանն ուղղված ներդրումներ՝ 99,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 61,3 մլն դրամի ներդրումներ, մասնավորապես՝ կառուցվել կամ վերակառուցվել են

ենթակայանների (պահեստների) յուղային տնտեսությունները, յուղահեռացման համակարգերը և վտանգավոր թափոնների պահահպանման համար նախատեսված շինությունները,

- մեքենա մեխանիզմների ձեռքբերում՝ 230,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 257,2 մլն դրամի ներդրումներ՝ ձեռք է բերվել 20 հատ մարդա-բեռնատար ավտոմեքենաներ և մեկ էքսկավատոր,
- Ընկերությանը պատկանող ենթակառուցվածքների երկրատեղեկատվական տարրերի (գծային ենթակառուցվածքների) հանութագրման աշխատանքների ամբողջական հավաքագրում՝ 100,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 106,7 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 4.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ

Համաձայն՝ Հանձնաժողովի և «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքված №ՀԾԿՀ-22/2-ԲՄԾՁԲ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի Ընկերությունում 2022 թվականի ընթացքում «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է կապիտալ ներդրումների տեխնիկական աուդիտ, որի շրջանակում ըստ տեխնիկական առաջադրանքի աուդիտորը մասնակցել է նաև Ընկերության կողմից ընթացիկ (2023թ.) տարում ձեռքբերվող բոլոր ապրանքանյութական արժեքների շուկայական գների և հնարավոր նոր շուկաների ուսումնասիրմանը:

Աուդիտորի կողմից ներկայացված հաշվետվությունների արդյունքները Ընկերության նախաձեռնությամբ կիրառվել է 2023 թվականի ընթացքում իրականացված կապիտալ ներդրումներով ձեռքբերված և օգտագործված սարքավորումների և նյութերի գների վերլուծության մեջ:

Արդյունքում իրականացված կապիտալ ներդրումներից Ընկերությունը 82,2 մլն դրամի ծախսերը համարել է կարգավորման տեսանկյունից ավելի իրականացված ծախսեր և նվազեցրել է կապիտալ ներդրումներից, հատկանշական է, որ նվազեցումը ամբողջությամբ կապալառու ընկերությունների կողմից օգտագործված նյութերի և սարքավորումների արժեքից և Ընկերության կողմից օգտագործված նյութերի և սարքավորումների արժեքից նվազեցման ենթակա գումար չի առաջացել:

Աուդիտի կողմից ներկայացված սարքավորումների և նյութերի գները Ընկերությունը օգտագործել է նաև իրականացվող աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման փուլում:

4.2 Աշխատանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ

Վերը նշված կետով նշված մոնիթորինգի արդյունքները ևս փաստում են, որ կապիտալ ներդրումներում օգտագործված ապրանքների և նյութերի մի մասը ձեռք է բերվում կապալառուների կողմից և դրանց գները գերազանցում են շուկայականը: Նշված գերազանցումները կարող են մի շարք գործոնների հետևանք լինել՝ մասնավորապես.

ա) Ընկերության կողմից ոչ միշտ են կապալառուին տրամադրվում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները, որի արդյունքում դրանց արժեքի նկատմամբ կապալառուները կիրառում են վերադիր ծախսեր և շահույթ, ինչը կապալառուների տեսանկյունից բնական է: Սակայն այդ նյութերն ու սարքավորումներն Ընկերության կողմից տրամադրելու դեպքում դրանց նկատմամբ կապալառուների կողմից վերադիր ծախսերի և շահույթի լրացուցիչ տոկոսներ չէին հաշվարկվի և Ընկերությունը կունենար լրացուցիչ եկամուտ և դրանք կուղղվեր սեփական կապիտալի մեծացմանը:

բ) կապալառուների կողմից այդ աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են Ընկերության կողմից կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից:

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ծավալները

Ընկերության կողմից 2023 թվականի ընթացքում Ներդրումային ծրագրով փաստացի ավարտված 34 409,3 մլն դրամի ներդրումների ծավալներում առկա են ներդրումներ, որոնք ենթակա չեն սակագնային մարժայով փոխհատուցման, մասնավորապես.

1. փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունում առկա են 0,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք ընթացիկ բնույթի են և ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում, ուստի այս ծավալը նվազեցվել է,
2. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման և այլընտրանքային էլեկտրամատակարարմանն ապահովում (մալուխային գծերի շղթաների ստեղծում) ենթաուղղություններով իրականացված ներդրումներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն Ընկերության 2012 թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների, այն է՝ մալուխային գծերի մինչև 50մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200մ երկարությամբ գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքներն ընթացիկ ծախսեր են: Այս ուղղությամբ նվազեցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է 83,1 մլն դրամ,
3. աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներից 28,8 մլն դրամը նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ Ընկերության աշխատակիցների աշխատավարձերն արդեն

իսկ ամբողջությամբ ներառված են սակագնային մարժայի ծախսային հոդվածներում,

4. նախագծային աշխատանքների ուսումնասիրության արդյունքում ևս իրականացվել են նվազեցումներ, մասնավորապես՝ շահագործման հանձնված նախագծման աշխատանքներից 37,6 մլն դրամը նվազեցվել է լիցենզավորված գործունեությանը դեռևս չմասնակցելու՝ դրանց հետ կապված աշխատանքներ չիրականացնելու կամ մասնակի (մինչև 30%) իրականացնելու պատճառով: Նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված նվազեցումների մեջ 10,6 մլն դրամի ներդրումները ևս նախագծային աշխատանքներ են:

   Վերոնշյալ 37,6 և 10,6 մլն դրամի ներդրումները Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի նշված նախագծերի արդյունքում իրականացված աշխատանքների ավարտից հետո,

5. նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 265,1 մլն դրամի աշխատանքներ, որոնք չնայած այն հանգամանքին, որ հանձնված են շահագործման, դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ դեռևս չեն միացել:

   Եվս 31,5 մլն դրամի աշխատանքներ նվազեցվել են առանց միացման վճարի գանձմամբ իրականացված ներդրումներից:

   Ընկերության սակագնային մարժայով նշված ներդրումների փոխհատուցման հարցը կքննարկվի համապատասխան բաժանորդներին փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելուց և միացման վճարները վճարելուց հետո,

6. ներկայացված Հաշվետվությունում առկա են 17,9 մլն դրամ ծավալով ներդրումներ, որոնք համարվել են չհամաձայնեցված և նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից, մասնավորապես՝

   - այլ անձանց պատկանող հիմնական միջոցների ձեռքբերման ենթաուղղությամբ իրականացվել են 5,1 մլն դրամի ներդրումներ,
   - տեղադրվել է 1,5 մլն դրամ արժեքով «Մերկուրի» մակնիշի հաշվիչներ, որոնք չեն բավարարում բազմասակագնային էլեկտրոնային

հաշվիչներին ներկայացվող՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 22-ի 96-ԶԴ հրամանի 6.9 կետի տեխնիկական պահանջները,

- այլ անձանց պատկանող հիմնական միջոցների վրա իրականացվել են 11,3 մլն դրամի ներդրումներ:

Իրականացվել է նաև Հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 579,3 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Նոր սպառողների միացման նպատակով գանձված 3 430,1 մլն դրամ միացման վճարները ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

5.2 Լուծարված և օտարված հիմնական միջոցներից նվազեցումներ

Համաձայն հանձնաժողով ներկայացված տեղեկատվության [Տեղեկատվություն 6] Ընկերությունը 2023 թվականի ընթացքում կարգավորվող գործունեության մասով լուծարել է 177,6 մլն դրամի հիմնական միջոցներ, որից 69,3 մլն դրամի նյութեր և այլ պիտանի դետալներ ընդգրկվել են կապիտալացվող աշխատանքներում, ընթացիկ շահագործման և նորոգման աշխատանքներում ինչպես նաև օտարվել կամ օգտագործվել են այլ ուղղություններով: 2023 թվականի ընթացքում Ընկերությունը օտարել է 1,9 մլն դրամի հիմնական միջոցներ [Տեղեկատվություն 7]:

Արդյունքում՝ լուծարված և օտարված հիմնական միջոցներից 71,2 մլն դրամը դիտարկվել է, որպես լրացուցիչ եկամուտ և նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

2023 թվականին լուծարված հիմնական միջոցների ուսումնասիրության արդյունքում փաստվել է Ընկերության կողմից լուծարած 216 հատ տարբեր լարման ուժային տրանսֆորմատորներից որևէ պիտանի նյութ չի ստացվել, որից 2 հատը 110 կվ լարման տրանսֆորմատորներ են: Շուրջ 2 676 հատ հաշվիչների մետաղական արկղերը լուծարվել են զրոյական արժեքով:

Հարկ է նշել, որ նույնիսկ նշված հիմնական միջոցների (տրանսֆորմատորներ, արկղեր և այլն) առկա մետաղյա ջարդոնի իրացման գինը զգալի գերազանցում է դրանցից ստացված նյութերի արժեքը, իսկ օրինակ գունավոր մետաղներ պարունակող տրանսֆորմատորների և այլ սարքավորումների գրեթե զրոյական արժեքով լուծարումը անհասկանալի է:

Միևնույն ժամանակ, լուծարվել են նաև տարբեր տիպի սարքավորումներ, որոնք շահագործման են հանձնվել 2020-2023 թվականների ընթացքում: Մասնավորապես անհասկանալի է 2020-2023 թականներին շահագործման հանձնված «Քվանտ» և այլ տիպի հաշվիչների և դրանց արկղերի լուծարման փաստը:

Լուծարված հիմնական միջոցների մեջ մալուխային գծերի լուծարման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չկա:

Վերը նշվածների վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ:

5.3 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ Աղյուսակ 5-ում ներկայացված է Ընկերության կողմից 2023 թվականի ընթացքում փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 5

մլն դրամ (առանց ԱԱՀ)

Հ/Հ	Անվանում	Ծավալը
1	**2023 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը**	**36,678.8**
2	**Անավարտ աշխատանքներ**	**2,269.5**
3	**2023 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**34,409.3**
4	**2023 թվականի ընթացքում կարգավորման մասով ավարտված ներդրումների ծավալը**	**34,327.0**
5	**Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝**	**4,544.9**
5.1	**Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ**	**1,043.7**
5.1.1	Ընթացիկ բնույթի աշխատանքների ուղղությամբ իրականացված ծախսումներից	0.4
5.1.2	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,7 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	83.1
5.1.3	Սակագնով փոխհատուցվող աշխատանքի վճարման գծով ծախսումներից	28.8
5.1.4	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող նախագծային աշխատանքներից*	37.6
5.1.5	Նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված իրականացված ներդրումներից	296.6
5.1.5.1	*էլեկտրական ցանցին չմիացված բաժանորդների ուղղությամբ իրականացված ներդրումներից**	*265.1*
5.1.5.2	*Առանց միացման վճարի գանձման իրականացված ներդրումներից*	*31.5*
5.1.6	Չհամաձայնեցված ներդրումներ	17.9
5.1.7	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	579.3
5.2	**Լուծարված և օտարված հիմնական միջոցներից ստացված եկամուտներ****	**71.2**
5.3	**Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ**	**3,430.1**

6	**2023 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**29,782.1**

* Լիցենզավորված գործունեությանը մասնակցելու կամ աշխատանքներն ավարտելու համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու և նոր սպառողների միացման վճարները փաստացի իրականացվելու դեպքում իրականացված ներդրումները կներառվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության 2023 թվականի ներդրումային ծրագիրը ընդհանուր կատարվել է 91,1%-ով:
2. Ավարտված ներդրումների հիմնական հատվածը՝ 58,3%-ը ուղղվել է նոր սպառողների միացման ու հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ իրականացված ներդրումներին:
3. 2023 թվականի ընթացքում 0,4/6(10) և 35/110 կՎ լարման ցանցերում էլեկտրատեղակայանքների հրաժարումների քանակը 2022 թվականի համեմատ բարելավվել է 30,7%-ով, մեկ բաժանորդի հաշվով հոսանքազրկումների միջին հաճախությունը՝ բարելավել է 8,7%-ով, իսկ հոսանքազրկումների միջին տևողությունը՝ 18,1%-ով: Երևան քաղաքում և որոշ մարզերում գրանցվել են բացասական ցուցանիշներ: Մտահոգիչ են Սյունունիքի և Արագածոտնի մարզերում գրանցված բացասական ցուցանիշները:
4. Սպառողների հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը 2022 թվականի համեմատ բարելավել է 18%-ով՝ 12,85 ընդհատում/ժամից հասնելով 10,5 ընդհատում/ժամի:
5. Մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության (լարման շեղում/բաժանորդ) և տևողության (ժամ/բաժանորդ) ընդհանուր ցուցանիշները 2022 թվականի համեմատ բարելավվել են համապատասխանաբար՝ 3,1% և 8,9%-ով: Էական բացասական ցուցանիշներ են գրանցվել Սյունիքի, Կոտայքի և Լոռու մարզերում:
6. Հաշվի առնելով, որ Ընկերության Ներդրումային ծրագրի փոփոխությունը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 20-ին, կարելի է փաստել, որ Ընկերության կողմից պատշաճ մոտեցում չի ցուցաբերվել ներդրումային ծրագրի փոփոխության գործընթացին և ներդրումների կատարման առաջնահերթության հարցին՝ մասնավորապես, Ներդրումային ծրագրի սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ իրականացվող հասցեական ծրագրերին:

7. Ընկերությունը տարբերակված մոտեցում է ցուցաբերում հասցեական խոշորամասշտաբ և ավելի փոքր ծավալով ծրագրերի իրագործման գործընթացում, հաշվի չառնելով, որ փոքր հասցեական ծրագրերը հիմնականում ձևավորվում են սպառողների կողմից գրված դիմում բողոքների և Ընկերության համապատասխան մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների, վերլուծությունների հիման վրա և բաժանորդների համար լուծում են թիրախային խնդիրներ:
8. Նոր սպառողների էլեկտրակայանքները էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2023 թվականին փաստացի շահագործման են հանձնվել 18 321,8 մլն դրամի հիմնական միջոցներ: Ընկերության կողմից իրականացված ներդրումների արդյունքում 265,1 մլն դրամի հիմնական միջոցներ դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր սպառման համակարգեր չեն միացել, ևս 31,5 մլն դրամի ներդրումներ իրականացվել են առանց միացման վճարի գանձման:

   2023 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 14 051 նոր սպառման համակարգեր:
9. Ընկերության կողմից ձեռքբերվող բոլոր ապրանքանյութական արժեքների շուկայական գների և հնարավոր նոր շուկաների աուդիտորի կողմից ուսումնասիրման (իրականացվել է 2023 թվականին) արդյունքները Ընկերությունը սեփական նախաձեռնությամբ կիրառել է 2023 թվականի ընթացքում իրականացված կապիտալ ներդրումներով ձեռքբերված և օգտագործված սարքավորումների և նյութերի գների վերլուծության մեջ: Արդյունքում Ընկերությունը իրականացված կապիտալ ներդրումներից 82,2 մլն դրամի ծախսերը համարել է կարգավորման տեսանկյունից ավել իրականացված ներդրումներ:
10. Նյութերի և սարքավորումների մի մասը դեռևս ձեռք է բերվում ոչ թե Ընկերության, այլ կապալառու կազմակերպությունների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է ապրանքների և ծառայությունների՝ բարձր գներով ձեռքբերմանը:

11. Ընկերությունը բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարելավման ծրագրով իրականացվող աշխատանքները իրականացրել է նաև մարզերում: Արդյունքում հանրապետության ամբողջ տարածքում 2023 թվականի ընթացքում 16 բազմաբնակարան շենքերի շուրջ 70 մուտքերում բարելավել են էլեկտրամատակարարման ցանցերը: Այս ուղղությամբ իրականացված ներդրումները նախորդ տարվա համեմատ գրեթե 3 անգամ նվազել են:
12. Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 36 678,8 մլն դրամի ներդրումներ, որից 1 043,7 մլն դրամի (ընդհանուրի 2,8%-ը) ներդրումները համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Հարկ է նշել, որ ներդրումների ծավալից նվազեցումները 2022 թվականի համեմատ կրճատվել են 4 տոկոսային կետով (2022 թվականին՝ 6,8%):
13. Հարկ ենք համարում նշել, որ անհրաժեշտ է հետևողական գործուն միջոցառումներ ձեռնարկել Հանձնաժողովի կողմից վերը նշված թերությունները և անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում Ընկերությունը կմեծացնի իր կողմից իրականացված ներդրումների դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը և այդ գումարները արդյունավետ ծախսելու պարագայում կապահովվեն հնարավոր տեխնիկական և տնտեսական օգուտներ, որոնք դրական ազդեցություն կունենան նաև սպառողների սպասարկման որակի և բաշխման համակարգի բնականոն գործունեության զարգացման վրա: Ուստի կարծում ենք, որ Ընկերությունը պետք է հետևողական ջանքեր գործադրի իր կառավարման արդյունավետությունը ավելի բարձրացնելու և անարդյունավետ ծախսերը հնարավորինս բացառելու նպատակով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Որոշում 2- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի №438-Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Հաշվետվություն - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին Ընկերության 2024 թվականի մայիսի 10-ի №Ե-1509-24 գրությամբ ներկայացված հաշվետվություն

Տեղեկատվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 2-«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 3-Սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2023 թվականի տեղեկատվական բազա՝ (https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators)

Տեղեկատվություն 4-Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2023 թվականի տեղեկատվական բազա՝ (https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators**)**

Տեղեկատվություն 5-Էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների 2023 թվականի տեղեկատվական բազա՝ (https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators)

Տեղեկատվություն 6-Տեղեկատվություն լուծարված հիմնական միջոցների մասին

Տեղեկատվություն 7-Տեղեկատվություն հիմնական միջոցների լուծարումից ստացված դետալների, համալրող շինվածքների և այլ պիտանի նյութերի ծախսման ուղղությունների մասին

Տեղեկատվություն 8-Տեղեկատվություն օտարված (վաճառված) հիմնական միջոցների մասին

Տեղեկատվություն 9-Տեղեկատվություն անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների մասին